Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է բավարարման, հիմնական պահանջ վերաբերում է գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճին, իսկ Հայցվորի կողմից նախապես 80,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումար, որը նման վեճերով հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարից՝ 30,000.00 ՀՀ դրամից, ավելի է 50,000.00 ՀՀ դրամի չափով, Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես սահմանված չափով նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ 50,000.00 ՀՀ դրամի չափով ավել վճարված պետական տուրքի գումարը ՀՀ պետական բյուջեից ենթակա է վերադարձման «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը:

Անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրությանը՝ Դատարանն արձանագրում է, որ «Ավետիսյան Լեգալ Քոնսալթինգ» ՍՊ ընկերության (Կատարող) և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության միջև (Պատվիրատու) 2024թ. հոկտեմբերի 10-ին կնքվել է Հանձնարարության թիվ 20/24 պայմանագիրը, որի 1.1 և 3.1 կետերի համաձայն՝ սույն պայմանագրով, հանձնակատարը պարտավորվում է հանձնարարողի անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, իսկ սույն հանձնարարության կատարման համար Հանձնարարողը Հանձնակատարին պարտավորվում է վճարել 300,000.00 ՀՀ դրամ:

Տվյալ պարագայում ներկայացվել է հայց՝ թիվ «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի 09.09.2024թ. լուծումը և 19.09.2024թ. որոշումը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու պահանջների մասին, որը ենթակա է բավարարման, գործը քննվել է գրավոր ընթացակարգով, որպիսի պայմաններում Դատարանը եզրահանգում է, որ սույն գործով որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 100,000.00 ՀՀ դրամը, հետևաբար՝ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության՝ թիվ «ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28-1» ծածկագրով պայմանագրի

միակողմանի 09.09.2024թ. լուծումը և 19.09.2024թ. որոշումը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2024թ. օգոստոսի 15-ին կնքված թիվ «ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28-1» ծածկագրով մատակարարման պայմանագրի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության կողմից 2024թ. սեպտեմբերի 9-ի միակողմանի լուծումը:

Անվավեր ճանաչել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության 2024թ. սեպտեմբերի 19-ի թիվ Ա/Ո-10 որոշումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությունից հօգուտ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության բռնագանձել 30,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ պետական բյուջեից «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերությանը վերադարձնել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am